

Amc 156

50m



ԳՐԱԿԱՆ, ԲԱՂԱՔԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՆՐԱՅԻՆ

ԱՄՍԱԳԻՐ

ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ ՏԱՐԻ

1908

№ 3—4

ՆՈՅԵՄԲ.-ԴԵԿՏ.

Թ Ի Յ Լ Ի Ս

ԵԼԵԲՐԱՄԱՐԴ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ՝ ՊՈԼԻՑ. 7.

1908



„ԼՈՒՄԱՆ“ ԺԴ ՏԱՐԵՇՐՋԱՆԻՆ

Տասն և երեք տարի առաջ ծնունդ առաւ «Լու-
ման», որի XLIX գիրքը այսօր է լոյս տեսնում...

1896 թուի սկիզբն էր, երբ «Լումայի» I գիրքը
լոյս տեսաւ, բովանդակելով իւր մէջ պատմական և
գրական նիւթեր, և այդ օրից Լուման—սակաւա-
թիւ ամսագիրներից մինը—գրաւեց իւր տեղը պար-
բերական հրատարակութիւնների շարքում. երկար
տարիներ անցան այն օրից և շատ ու շատ տառա-
պալից օրեր պատեցին հայ ազգի և գրական աշ-
խարհի առանց այն էլ մառախլապատ թանձր հորի-
զոնը:

Բայց «Լուման» մնաց իւր դերում երկար տարի-
ներ, մինչև որ համառուսական ցաւալի ելք ունե-
ցող յեղափոխութիւնը թուլացրեց «Լումայի» վա-
ղուց ի վեր թուլացած նիւթականը. այո՛, կրկնում
ենք, միայն նիւթականը, որովհետև բարոյական
աջակցութիւնից «Լուման» մինչև օրս էլ զուրկ չէ և
կարող ենք վստահ կերպով ասել, որ մենք բարո-
յականը աւելին չենք ցանկացել:

1905 թուի արիւնալից փոթորիկը իր բազմաթիւ տնտեսական ու այլ խիստ կարեւոր հարցերով արգելադրեց եղաւ «Լուման» կանոնաւոր շարունակելու, բայց խմբագրութիւնը, չնայելով նախընթաց տարիներից բաց մնացած մի քանի հազար ռուբլու հասնող դիֆիցիտին, շարունակեց առանց յուսահատուելու հրատարակել «Լուման»։ Բայց հանգամանքները միշտ ուժեղ են մարդուց և մանաւանդ մի ուժասպառ մարդուց (մեր խօսքը ի հարկէ նիւթական ուժասպառութեան մասին է)։

Ահա այստեղ է միմիայն այն խորը և բշերին մատչելի պատճառը, որ «Լուման» վերջին երկու տարուայ ընթացքում անկարող եղաւ նոյնպիսի կանոնաւոր կերպով առատ նիւթ մատակարարել հայ ընթերցող հասարակութեան, որպէս նա տոկուն կերպով շարունակեց տասը տարուց աւելի. Հայ մամուլի դժբաղդ վիճակն է եղել միշտ վերջացնել իւր գոյութիւնը դիֆիցիտով, այն էլ ծանր, և կամ նիւթականի պակասութիւնից դրդուած. և շատ քիչ առևտրական ու այլ հանճարներ կարողանում են իրենց գոյութիւնը պահպանել բիշ թէ շատ յարատեւ ժամանակ։

Հայ աղան միշտ վախեցել է գրչից և բարւոք է համարել իւր սնդուկի առատ գանձը ծառայեցնել այնպիսի գործի, ուր կարելի է կրկնակի յետ ստանալ. հեռու է հայ ազգից այն օրը, երբ նրա ամեն մի անհատ պարտաւորապէս իւրովսանն կրմտածի մայրենի գրականութեան և գիտութեան բարգաւաճման համար։

Իսկ մինչ այն, թող անսասան կորովով առաջ ընթանայ գրչի հայ աշխատաւորը և իւր վարձատրութիւնը փնտռէ սնանկ հայ խմբագրութիւններում։ Լոյսը պիտի վերջի վերջոյ բնաջինջ անի խաւարը ու իւր շլացնող ճառագայթները նետելով դէ-

պի մութանկիւն, անշնչացնի լոյսից խորշող անհատ-
ներին և կամ նրանց սերունդները լոյսի ընտելացնի:

Բայց մենք շեղուեցինք: Մեր խօսքը «Լումա-
յի» մասին էր. մենք խօսեցինք նրա անկանոն
հրատարակութեան մասին. բայց մենք պիտի լռենք
այն առթիւ, թէ ինչ տուեց «Լուման» հայ ընթերցո-
ղին և ինչ դեր խաղաց նա հայ գրականութեան մէջ:
Այդ մասին իւր կոմպետենտ և ուժեղ խօսքը թող
ասի պատմական քննադատը, որի առաջ մենք պիտի
լռենք:

Մի երկու խօսք էլ Լումայի ապագայի մասին:

1909 թուին մենք փորձում ենք նորից վեր-
սկսել Լումայի շարունակութիւնը և ինչպէս միշտ՝
յուսագործիկ որեւէ ապահովութիւն ստանալուց. իսկ
եթէ հայ լուրջ մամուլի և գրականութեան իսկա-
կան բարեկամները գտնում են, որ Լուման իբրեւ
միակ գրական պատմական ամսագիր անհրաժեշտ է
հայ գրականութեան, թող շտապեն ապահովել ամ-
սագրի հրատարակութիւնը և ցոյց տան, որ արհա-
մարհանքի դրոշը վերացել է հայ մամուլի ճակա-
տից:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

